

Վերջերս Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի նորաբաց հայագիտական ամբիոնում ավարտվեց առաջին կիսամյակը: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հունգարիայի Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ղեկավարությունների փոխհամաձայնությամբ տասներկու հունգարացի և վեց հայ ուսանողներ ՊՊԿ համալսարանում կարողացան ուսումնասիրել հայագիտությանը վերաբերող բազմաբնույթ նյութեր: Այս համալսարանում դասավանդում են տարբեր երկրներից հրավիրված դասախոսներ: Արփինե Առաքելյանը, ով ժամանել է Հայաստանից և ՀՊՄՀ



ուսանողուհի է, այժմ հայագիտություն է ուսումնասիրում Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի նորաբաց ամբիոնում: Արփինեի հետ զրույցում վերջինս մեզ հետ կիսեց Հունգարիայից ստացած իր տպավորությունները՝ «Հունգարիան հյուրընկալ երկիր է օտարերկրյա ուսանողների համար: Ես առաջին անգամ եմ այսքան երկար ժամանակով բացակայում իմ երկրից և մինչև այստեղ գալը ներքին մտավախություն ունեի, թե արդյոք կկարողանամ հարմարվել անծանոթ երկրի բարքերին: Սակայն, գալով այստեղ, հասկացա, որ այդ մտավախությունն իզուր էր: Առաջին իսկ օրվանից չեմ ունեցել որևէ ներքին անհանգստություն կամ անհարմարության զգացում: Հունգարիան շատ հետաքրքիր է իր պատմությամբ, մշակույթով, մարդկանց կենսակերպով, ուստի շատ ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ սովորելու այս համալսարանում: Այստեղ գալուց առաջ ակնկալիքներս բոլորովին այլ էին, բայց իրականությունն սպասվածից առավել ոգևորող և հետաքրքիր էր»: Արփինեն անդրադարձավ նաև այն հարցին, թե ինչպես է տեղեկացել Հունգարիայի Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հայագիտական ամբիոնի մասին: Նա նշեց, որ իր կրթությունը շարունակելու հնարավորությունն իրականացվել է ուսանողների փոխանակման <<ԵՐԱԶՄՈՒՄ +>> ծրագրի շրջանակներում: «Երկու համալսարանների միջև համաձայնագրի շնորհիվ հայ ուսանողները հնարավորություն ունեն սովորելու ՊՊԿ-ում մեկ կամ երկու կիսամյակ, իսկ հունգարացի ուսանողները՝ Երևանում՝ ՀՊՄՀ-ում»:

Արփինեն, ներկայացնելով համալսարանի հայագիտական ամբիոնում ուսուցանվող առարկայացանկը, ասաց, որ այն բավականին հետաքրքիր և հագեցված է: «Ուսումնասիրել ենք բազմաթիվ առարկաներ, որոնց շրջանակներում անդրադարձել ենք հայոց պատմության այնպիսի առանցքային հարցերի, ինչպիսիք են հայկական սփյուռքի և համայնքների պատմությունը, Հայոց ցեղասպանությունը և դրանց վերաբերյալ առկա գրականությունը, տարբեր հեղինակների մոտեցումները այդ թեմաներին, Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը և բազմաթիվ այլ հիմնահարցեր»: Իսկ <<Ինչպե՞ս ես քո առաջին փորձառությունը կարևորում կամ գնահատում >> հարցին Արփինեն պատասխանեց՝ «Անչափ կարևորում եմ Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում սովորելու իմ փորձառությունը ինչպես մասնագիտական, այնպես էլ անհատական զարգացման նկատառումներով: Որպես ասպիրանտ՝ մեր համալսարանի հայոց պատմության ամբիոնում հետազոտությանս թեման Տրանսիլվանիայի հայկական համայնքն է և նրա ինքնության պահպանման խնդիրները 18-19-րդ դարերում: Թեմայի ուսումնասիրության համար իմ առաջնահերթ խնդիրներից մեկը հունգարերեն սովորելն է: Լեզուն բավականին բարդ է, բայց այդ բարդությունն էլ իր հետաքրքրությունն ունի : Ուստի այս ծրագիրը ինձ բացառիկ հնարավորություն է տալիս բոլոր խնդիրներն անելու և հաղթահարելու համար: Այս ծրագրի հրաշալի կողմերից մեկն

էլ
այն է, որ, ապրելով այստեղ, հնարավորություն ունեն ծանոթանալու և հաղորդակից լինելու
հունգարական մշակույթին, պատմությանը: Բացի դրանից

,
տարբեր երկրներից ժամանած ուսանողների հետ

շփումը

ինձ

հնարավորություն է տալիս ճանաչել նրանց մշակույթի բնորոշ

գծ

երը, ինչը մեծապես նպաստում է

ինձ

աշխարհայացքի և

մտահորիզոնի

ընդլայնմանը: Դրա շնորհիվ

հաղորդակից եմ դառնում

աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների

ն,

կարողանում ե

մ

ավելի

ճիշտ

գնահատել և վերլուծել իրավիճակները, ավելի լավ համագործակցել տարբեր մշակույթներ

և արժեքներ

ունեցող

մարդկանց հետ: Իսկ այդ ամենը ձևավորում է

հմտություն, կարողություն

և բնավորություն, որն ինձ

պետք է գալու

ինձ

ամբ

ողջ կյանքում: Գիտեմ, որ Բուդապեշտից բաժանվելու եմ մեծ դժվարությամբ, քանի որ

հասցրել եմ սիրելի այ

ս քաղաքը

: Շատ շուտով ևս հինգ հայ ուսանողներ կժամանեն Բուդապեշտ՝ մեկ կիսամյակ այստեղ

սովոր

ելու:

Համոզված եմ

, որ

մեզ համար

բովանդակակալից և

ուսանելի

կիսամյակ է լինելու՝ հագեցած հետաքրքիր դասընթացներով և նոր բացահայտումներով:

Բուդապեշտը այն քաղաքն է, ո

ւ

ր երբեք չես ծանծրանա և երբեք չես դադարի քեզ համար նոր բացահայտումներ

անել

»

Մենք հաջողություններ ենք մաղթում բոլոր այն ուսանողներին, որոնք սովորելու համար ժամանելու են Հունգարիա, իսկ Հունգարիայից Հայաստան մեկնող մեր քույր-եղբայրներին ցանկանում ենք հետաքրքիր ուսումնառություն և հաճելի ժամանակ հյուրընկալ և ջերմ երևանցիների շրջապատում
: